արևելքից տարածվելով մինչև Սևանա լճի ավազանն ու արևմուտքից մինչև Վանանդ ու Բագրևանդ[4], կորցնում էր Ախուրյան գետից և Հայկական պարից դեպի արևմուտք և հարավ ընկած շրջանները։ Վիլայեթի կազմից դուրս էին գալիս Վանանդը, Ալաշկերտն ու Բայազետի բերդը մերձակա շրջաններով, որտեղ ժառանգական տիրության իրավունքով հողեր էին ստանում հարավային և հարավարևմտյան Հայաստանից գաղթած քրդական ցեղերի առաջնորդները։ Իսկ քրդական Մահմուդի և Փազուկի ցեղերը, որոնք շարունակում էին հավատարիմ մնալ շահ Իսմայիլին, օլքաներ էին ստանում Ալաշկերտի արևելյան հատվածում և այդ ժամանակ Զուխուր Սա՛դի մեջ մտնող Մակվի և այլ շրջաններում[5]։

Զափազանց կցկտուր են տեղեկությունները XVI դ. առաջին երկու տասնամյակների վերաբերյալ։ Պարզ չէ հատկապես թե շահ Իսմայիլի օրոք, մինչև Չալդրանի ճակատամարտը և նրանից հետո, երբ Արարատյան երկրում նորից վերահաստատվել էր կըզըլբաշների իշխանությունը, ովքե՞ր են իշխել Զուխուր-Սա՛դի վիլայեթում։

Ղ. Ալիշանը «Այրարատում», հավանաբար, թուրքական աղբյուրների հիման վրա, շահ Իսմայիլի կառավարման առաջին տարիներին հիշում է ոմն Ռևան խան, գտնելով, որ վերջինս հավանաբար այսպես է կոչվել Երևան քաղաքի անունով[6]։ Պետք է ենթադրել, որ թուրքական որևէ ժամանակագրության մեջ Արարատյան երկրում իշխող կըզըլբաշ իշխանավորը կոչված է «ռևան խանի», որը նշանակում է «Երևանի խանը» (թուրքերը Երևանը անվանում են Ռևան)։ Դժվար չէ նկատել, որ այստեղ տեղանունը սխալմամբ դիտված է որպես անձնանուն։

Թեև որոշակի վկայություններ չկան, սակայն հավանական է, որ այդ տարիներին, երբ նոր իշխանությունը դեռևս վերջնականապես չէր հաստատվել նորաստեղծ պետության բոլոր ծայրամասերում, և Իսմայիլը շարունակում էր հաղթական կռիվներ մղել Իրանի հարավային և արևմտյան նահանգներում, Արարատյան երկրում տիրել են կըզըլբաշներին հարած Սա՛դլու մեծ ցեղի ամիրները, որոնք այդ շրջանի ամենամեծ և ազդեցիկ էլի իշխանավորներն էին և Սուրմալիում, Կաղզվանում, Կողբում, Արագածոտնում ու Արարատյան դաշտի մերձակա վայրերում ընդարձակ ժառանգական տիրություններ ունեին[7]։

1503—1510 թթ. Հավուց Թառի և Տաթևի վանքերին շահ Իսմայիլի տված հրովարտակները[8] հաստատում են, որ այդ տարիներին ամբողջ Հարավային Անդրկովկասն ու Պատմական Հայաստանի կենտրոնական ու հարավային շրջանները, այդ թվում նաև Զուխուր-Սա՛դի վիլայեթը ընդգրկված են եղել կըզըլբաշների պետության կազմում։

---

4 Տե՛ս Հ. Դ. Փափազյան, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դ.) (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1960, № 7—8, էջ 26—27)։

5 Իսքանդար-բեկ Թուրքեման, Մունշի, Թարիխ-ե ալամարա-յե աբբասի, Թեհրան, 1957 (պարսկ. բնագիր), հ. I, էջ 141 (այսուհետև՝ Իսքանդար Մունշի)։

6 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 300։

7 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կալվածագրեր, պրակ Ա, կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968, վավ. 21, 23, 25, 27 (այսուհետև՝ «Կալվածագրեր» I)։

8 «Հրովարտակներ» I, վավ. 8—11։